60. ՔԵՎՈՐ ՍԱՆԱՄԵՐ

Կէղնի, չէղնի մարթ ու կնիկ մե կէղնին։ Էղ մարթու կնիկ կպառկի կրերե աղե մի։ Էդ կնկա քեվոր աչք թալե զուր սանամեր։

Կնկա էրիկ կըսե.— Էրթանք էդ քևոր բերինք, մեր տղեն կնքինք։

Կնիկ կվերու կըսե.— Մենք ախքատ ինք, մեր քևորը հարուստ է, դու ի՞նչ գործ ունիս հարուստի հետ, բեր, մեր հոտաղ էնինք մըզի քևոր։

Իրիկ կըսե.— Թըխ էղնի։

Բերին զէդ էրեխուն կդնին էդ տաս տարեկան հոտղի գիրկ ու կկնքին։

Տղեն օր կկնքին, կնքաճաշ կդնին, ուրանց բարեկամներ կխանչին էդ հին քևորն լէ կխանչին։ Բայց թը հին քևորջ սիրտ էդ կնկա հետ խալը էր։ Էս անգամսի կուտին, կխմին, էղ խալը քևոր կվերու կըսե թե.

— Պետք է օր դեորով խաղ ըսինք, որն օր թը չկրցավ խաղ ըսեց, պետք է օր էլնա իգա քուրսու վրեն ու իրեք հաղ իշու պես զոռ։

Կես ըսեցին. «Էդման բան չէղնի». բայց թե հարստի խոսք էր, հ՚առեճ գնաց։

Կես մե ըսեցին ուրանց խաղեր, մնաց էրկու մարթ օր ըսեր, դեոր զար պզտիկ քևորջ։ Քևոր չէ՞ օր չգիներ, շա՞տ կարմրավ։ Սանամեր տեսավ օր ուր պզտիկ քևոր կարմրավ, ուր նոր մանուկ աստծուն մատաղ կանչեց օր՝ «Իմ պզտիկ քևոր ամոթով չէղնի»։

Քևոր կարմրուկ էլավ դուրս, լաց ու խանչեց աստված, ըսեց.

«Աստվա՜ծ, դու ի՞նչ կրակի մեջ էր ընձի թալեցիր»։ Աստված ճամփեց ուր հրեշտակ ու ըսեց տղին.

— Տղա՜, հ՚որի՞ դուլաս, գնա, նստի, էն խըդըր օր քու բերան բաց ու խփու։

Տղին գիգա տուն, նստի ուր տեխ։ Խաղ ըսելու դեոր գիգա տղին։ Տղեն լէ աստծու հրմանքով խաղ կխանչե ու կվերջանա։ Դեոր գիգա խալբ ու ճոչ քևորոջ, աստծու հրմանքով խալբ քևոր ինչ օր գիներ էն լէ մոռցավ։ Ըսանգամինսի ինք գելնա ուր օտքով կկանի քուռսու վրեն ու իրեք հաղ իշու պես կզռա։ Իդոտկուն մաբթիք գելնան ամեկ ուր տուն կէրթա։

Ժամանակ մե գընցնա, ծեն կէրթա թագավորին, թը ֆիլան քաղաք իդըմլա աշըղ մե կա, հ՚որի, օր էդ պղտիկ քևոր աստծու հրամանքով դարձեր էր աշըղ։ Թագավոր կխանչե աշըղ քևոր ու կտանե։

Էդ թագավորին քառասուն աշըղ կէղնի. էդ աշըղներ էնպես աշըղ ին օր էդ էրկրի մեջ էդըմլա աղեկ աշըղ չկեր, թագավորնեկան աշըղներ են, լավ խաղ կըսին։

Քևոր աշըղ գիգա կմտնա թագավորի դիվան, կտեսնա օր էդ աշըղներ խաղ կխանչեն։ Աշըղներ օր կտեսնին քևոր աշըղ, կըսին. «Հրամեցի, նստի, հրամեցի նստի, տեսնանք դու ի՞մալ աշըղ ես օր քու ծեն ախշրքի մեջ ցվրեր ին»։

Քևոր աշըղ կնստի ու կբաշլայե խաղ ըսել։ Յոթն օր, յոթ գիշեր կերգի, քառասուն աշըղներ լէ կախթի, չարա չկերնան էնին էդ քևոր աշըղի հետ։ Թագավոր կըսե քառասուն աշըղներուն.

— Մեր գլոխ պըտի զարկիմ։

Աշըղներ կուզին օր ուրանց պատճառ գտնան ազատին։ Կբերին ձուկ մե կթալին տոպրկի մեջ ու պատին կկախին, քևոր աշըղից գողտու։ Աշըղներ թագավորին կսին. «Մադամ օր էդի լավ աշըղ է, էդ տոպրկի միջուն կհանե, թե հանեց, մեր գլոխ քըզի հալալ էղնի, թե օր չհանեց՝ պետք է օր ըդրա գլոխ զարկիս»։

Թագավոր կխանչե քևոր աշըղ, կհարցու մոտեն.

— Էն պատից կախուկ տոպրկի մեջ ի՞նչ է։

Աշըղ կխանչե զաստված ու կսկսե խաղով հ՚առճի հաղ քննել էրկինք, ամեն բան ջուխտ կէղնի, բան մե պակաս չէղնի էրկնուց։

Կըսե թագավորին.— Էրկինք բան մե չկա, ահան ես իջա գետին, էս անգամինսի գետին պտի քննիմ։

Գետին լէ քննեց, բան մե պակաս չկեր, ահա բան թրմմեր,

ջուխտ էր։ Իդահխսուն կիշնի ջրի մեջ կբննե. տեսնա օր հանդե ամեն բան թըմմե, ձկներ թաք դելնան, ձկներ լէ կշխտկե, մե ձուկ թաք գելնա։

Թագավորին կըսե.— Մկա պտի զէդի հանիմ, թը ի՞նչ է օդա տոպրկի մեջ դրուկ ա,— կըսե,— էդ տոպրկի մեջ ձուկ է դրուկ։

Թագավոր կաջբնա, ու կխանչա զուր քառասուն աշըղներ ու գլոխ գիտա զարկել։ Բավականին փարա գիտա աջըղին ու աջըղ գելնա կէրթա ուր էրկիր։